ՀԱՍՄԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ «ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ» ԵՐԿՈՒՄ

Միջին հայերենը իր զարգացման օրինաչափություններով արտացոլում է գտել ոչ միայն ինքնուրույն, այլ նաև թարգմանական գրականության մեջ:

Այս առումով հայ թարգմանական գրականության մեջ անգնահատելի սկզբնաղբյուր է «Գիրք վաստակոց» երկը, որի թարգմանությունը կատարվել է «Գեոպոնիկայի» արաբերեն տարբերակից: Այս երկը կարևորվում է նաև բայական համակարգի դրսևորման տեսանկյունից, քանի որ այստեղ պահպանվել են թե գրաբարի բայերի հատկանիշները և թե միաժամանակ արտացոլում են գտել միջին հայերենին բնորոշ բայական նոր ձևերն ու հատկանիշները: Հատկապես զգալի հետաքրքրություն են ներկայացնում դերբայները, որոնք իրենց դրսևորման ձևով և հատկանիշներով բազմազան են վերոհիշյալ երկում: Ինչպես գիտենք միջին հայերենում արդեն ձևավորվում են հարակատար, վաղակատար և անկատար դերբայները, որոնք չկան գրաբարում, ընդ որում հայտնի է, որ *-ել* (եալ>ել) վերջավորությամբ վաղակատար և *-ած* վերջավորությամբ հարակատար դերբայները գրաբարի անցյալ դերբայի հետագա զարգացման արդյունք են: Սակայն պետք է նկատել, որ «Գիրք վաստակոցում» ընդհանրապես չեն հանդիպում անկատար և վաղակատար դերբայները: Վաղակատարի փոխարեն այստեղ առատորեն գործածվում է *-եալ* վերջավորությամբ անցյալ դերբայը, որն էլ ինչպես նկատում է Յ.Կարստը, պետք է գրաբարաբանություն համարել, քանի որ այն խոսակցական լեզվում կենդանի չի եղել և ընդունվել է իբրև գրքային ձև, որը գրաբարից է անցել առանց փոփոխության[1]: Այս հոդվածում նպատակահարմար ենք գտնում քննել հարակատար դերբայի կիրառությունը «Գիրք վաստակոց» երկում, քանի որ այն, գործածվելով անցյալ դերբային զուգահեռ, հանդես է բերում իրեն բնորոշ գրեթե բոլոր առանձնահատկությունները:

Հայտնի է, որ հարակատար դերբայը ձևավորվել և ամբողջացել է միջին հայերենում: Սակայն անժխտելի է, որ -ած վերջավորությամբ այս դերբայը գրաբարում ևս կիրառություն ունի, պարզապես հանդես է գալիս իբրև գոյական և ածական: Ա.Աբրահամյանը իր «Հայերենի դերբայները և դրանց ձևաբանական նշանակությունը» գրքում ըստ «Առձեռն բառարանի» ներկայաց-

[1] .Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Երևան, 2002, էջ 265:

նում է գրաբարում գործածվող -ած մասնիկով բառերը[2], որոնք, սակայն, իբրև բայ չեն ըմբռնվում: Մինչդեռ միջին հայերենում հարակատարը ամբողջանում է՝ հանդես գալով ոչ միայն որպես ածական և գոյական, այլև իբրև ժամանակակերտ դերբայ[3]: Յ.Կարստը իրավացիորեն հարակատարը դիտում է իբրև հին ձևի շարունակությունը, որը գրական լեզու է մուտք գործել միջին հայերենի շրջանում[4]: Ինչպես գիտենք, հարակատար դերբայը ձևավորվում է -ած մասնիկով, որը պարզ և բազմապատկական բայերի դեպքում դրվում է ներկայի, իսկ ածանցավոր բայերի դեպքում՝ անցյալ կատարյալի հիմքի վրա:

«Գիրք վաստակոց» երկում այս դերբայը հանդես է գալիս միջին հայերենին բնորոշ բոլոր դրսևորումներով, ընդ որում նկատելի է, որ այն գրեթե միշտ էլ կրավորական իմաստ է արտահայտում: Հարակատարի՝ կրավորական իմաստ արտահայտելու երևույթը նկատել և հանգամանորեն քննել է Ա.Աբրահամյանը[5]:

Նկատենք, որ այստեղ ընդհանրապես չեն հանդիպում հարակատարի՝ ներգործական իմաստով այնպիսի կիրառություններ, որոնք համապատասխանեն վաղակատար դերբայով ձևերին: Պատճառը թերևս այն է, որ *–ուած* վերջավորությամբ ձևերը հանդես են գալիս միջին հայերենի երկրորդ շրջանում, երբ հարակատարը սկսում է ներգործական սեռի իմաստ արտահայտել[6]:

Հարակատար դերբայը նախ և առաջ օժանդակ բայի հետ կազմում է հարակատար ներկա և անցյալ բաղադրյալ ժամանակները: «Գիրք վաստակոցում» գործածվում է միայն հարակատար ներկան, ինչն էլ պայմանավորվում է շարադրվող նյութի բնույթով: Բերենք օրինակներ.

«Եւ *հարցած է* ընդ Դիմոկրատէս իմաստասէրն վասն ապրելոյ»(196): «*Ճշմարտած է*, որ կանաչն զաղբն բնութեամբ սիրէ և զջուրն»(160): «...և այսու *չափած* և *կշռած է* իմաստնոցն»(55): «Արդ *պնտած է* և *սահմանած*, որ քանի մազմզկով գտնուս՝ զայն տնկես»(62): «Եւ *վստահած է*, մեղուքն իւրեանց թագաւոր ունին»(191): «Եւ *փորձած է*, որ երբ պտուղ ունենայ նա 'ի կըտին տեղն դամոն ընծայի, և 'ի դրուցէ դեղձ»(156): «Ճակատն լայն՝ այն է լաւ, և ծաղկ լինի բուրդն. և գռզաբուրդն *ապիգոված է*»(214): Եւ այս է վանձնատին գիւտն, որ ճշտգրտիւ *ընտրած է* լաւ քան զամենայն» (221): «Կամ թէ *նմանեցուցած է* աղաւնոյ ծիրտն մարդոյ աղբին...»(28):

---

[2] Տե՛ս նշված աշխատությունը, էջ 212-215:
[3] Ակնարկներ միջին գրական հայերենի, Երևան, 1972, էջ 311:
[4] Յ.Կարստ, նշված աշխատությունը, էջ 340:
[5] Տե՛ս Ա.Աբրահամյան, Հայերենի դերբայները և դրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 367-373:
[6] Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Երևան,1975, էջ 239-240:

Ինչպես տեսնում ենք, բերված բոլոր օրինակներում էլ հարակատար դերբայը կրավորական իմաստով է գործածված: Հանդիպում է ընդամենը մեկ օրինակ, ուր այն չեզոք սեռի իմաստ է արտահայտում. «Եւ տե՛ս զի չասե զքեփն թէ *ելած է* և *պակսած* 'ի կշռոյն»(31):

«Գիրք վաստակոցը» աչքի է ընկնում նաև հարակատար+ լինել բայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակների գործածությամբ: Այս դեպքում դերբայը մնում է անփոփոխ և խոնարհվում է միայն «լինել» բայը, որը փաստորեն օժանդակ բայի դեր է կատարում: Այստեղ հանդիպող բոլոր օրինակներում «լինել» բայը գործածվում է ըղձական եղանակի III դեմքով: Օրինակներ՝ «...և զուռերն որ ընդ ոսկերն 'ի վեր *լինին անցուցած* ընդ իրեար՝ ոլորեա...»(130): «...ա՛ռ հոռոմ ձիթին տուրտին, որ *աղած չլինի*»(16): «...որ խակ և ազոխախառն *լինի կթած*»(98): «Եւ այն այգին, որ 'ի չոր և 'ի նօսր գետին *լինի դրած*»(47): «Եւ այսր նշան այն է՝ որ տերևքն սպիտակին և զերդ *թօշմած լինին*»(75): «..և թէ *խառնած լինի* ծովուն և քաղցրն՝ լաւն այն է»(32): «..կտաբոյսքն վատուժ են քան զայն, որ 'ի ծառոցն *խլած լինին*»(142): «Եւ տե՛ս զամէն, երբ պանն *կատարած լինի* 'ի կոճակն՝ կթեա...»(193): «...նա ոչ աղի *կերած լինին* և ոչ կծու»(97): «Եւ համամայն աղուորագոյն և *ծաղկած լինի* և հեշտ լեսի...»(110):

Հարակատար դերբայը առանձին դեպքերում գործածվում է նաև պիտի հարկադրական եղանակիչի հետ: Այս կիրառությունը շատ տարածված է Ղարաբաղի բարբառում[7]: «Գիրք վաստակոցում» հանդիպում են հետևյալ օրինակները. «Բայց տեղն յորդել թէ կամենաս լաւ աղբած և *շինած պիտի*» (161): «Եւ ջուրդ զոր անուանեցաք յառաջ՝ *եփած պիտի* և *սնուցած*»(186): «...և կրով ծեփած պիտի և կրակաց մոխրով և լեսած կղմնտրով և 'ի վերայ *ծածկած*...»(87): «Եւ տունկքն 'ի յաղէկ ազգէ *պիտին ընտրած*»(179):

Հարակատար դերբայը աչքի է ընկնում նաև մեկ այլ կիրառությամբ. ինչպես և անցյալ դերբայը, այն գործածվում է եղանակային ձևերի հետ՝ լրացնելով գլխավոր գործողությանը: Բերենք օրինակներ. «Եւ ոմանք յայդպիսի գինին դաղձ *ձգեն ծարծատած*»(86): «...և ապա երկու կոնգոմ սոնոպրի՝ աղէկ *խորոված կապեա* 'ի սպրկիկ կտաւ»(107): «...զի տղային զերդ *երկիւղած առնէ*» (167): «...իրեար *խառնեա թրջած* և տուր երեք օր զհետ իրերաց, օգտէ» (213): «Են ոմանք, որ յանճարակութենէ՝ զճիւղսն ոստաքանց առնեն և *սմբակած տնկեն* և այլ *պանդրած* և *մազմզկած տնկեն*»(178): «..այլ զերդ տուրտին *կենայ փակած*»(84):

---

[7] Տե՛ս Ա.Աբրահամյան նշված աշխատությունը, էջ 388:

«Գիրք վաստակոց» երկում հարակատար դերբայը հաճախ հանդիպում է գոյականական կիրառությամբ: Իբրև գոյական՝ այն հոդ է ստանում և հոլովվում: Այստեղ հարակատարը հիմնականում գործածվում է ուղղական և հայցական հոլովներով՝ հանդես գալով ենթակայի և ուղիղ խնդրի պաշտոններում: Բերենք օրինակներ. «...և քան զամեն լաւն և *գովածն* սանդղովս է» (183): «..և ա՛ռ մկնսոխ մի և ի *կապածդ* հագո»(130): «Ապա տարւոյ մի կամ՝ երկու տարւոյ *ներխեցուցածն* լաւ է» (160): «...և պտուղն պարարտ յոյժ քան զայլ աւուր *տնկածսն*»(69): «եւ *զքերեցածն* 'ի յայն ճանաչես...»(226): «...և այն կու աւերէ զգինին, որ *զհասածն* և զխակն հետ իրերաց կու խառնեն 'ի կթելն»(57): «եւ թէ ոք *աղած* ճրագուով օծանէ զկարասին բերանն՝ այլ ընդ *օծածն* 'ի վեր չելանէ եռն»(94): «եւ արժան է... *զծռածն* 'ի պարանէն ղորդել...»(67): «Մեղուն *զսատակածս* իւր 'ի դուրս լնու 'ի փեթակէն»(195):

Առանձին դեպքերում հարակատարը հանդիպում է սեռական- տրական հոլովով, ինչպես՝ «եւ թէ այրես զհօտն և զայրուքն՝ ի վերա *խայթածին* դնես՝ օգտէ »(8): «եւ *կատղածի խածածի* դեղ է ...»(162): «եւ երբ տեսանես որ *ճեղքածն* ներքև աղէկ մազմզուկ առնու, դու փորեա և բա՛ց *ճեղքածին* և մազմզկին ներքև կտրեա»(148):

Հարակատար դերբայը «Գիրք վաստակոցում» ամենից հաճախ հանդիպում է ածականական-որոշչային կիրառությամբ: Այս դեպքում թէ չեզոք և թէ՛ ներգործական սեռի բայերը գործածվում են կրավորական իմաստով: Բերենք օրինակներ. «եւ այլք զկոյզն 'ի *ջրած* գինին թանան...»(132):.«*Եփած* գինի արա և 'ի ներք խառնեա, ուժով լինի»(96): «...և զփոսն աղէկ *ներխած* աղբով լից և զհողն 'ի վերայ...»(66): «...և դարմանն՝ առատ *ծեծած* և *կեղևած* գարի»(225): «եւ 'ի մէջ մանրային մսուրս պարտ է շինել *ծնած* ոչխարացն»(215): «...ա՛ռ մեղր *եռացուցած* և 'ի փրփրէն *սրբած* ...» (127): «...և ապա *զտակռճած* տունկդ հան և տար 'ի տակքն տնկեա »(59): «...առ մանր աղ հինգ նուկի և *այրած* քար»(113): «և յայն *աւերած* կարասէն հան զգինին և յիստակացո»(113): «...և յետ հօտելոյն վաստակեա որ *զկոխած* գետինն կակղացուցանէ» (42): «...և ա՛ծ զվերոյ գրեալ *շինած* աղջուրն...»(186): «...և ապա զտակքն երկաթի սարուածով կտրեա, և *հալած* ձիւթ կա՛լ»(33): «...և 'ի ջուր խառնեա, և 'ի վերայ *վնասած* արտին ցանեա»(74): «...և խառնեա, լից 'ի *քացախած* գինին»(114): «...և թէ 'ի վերա *տաքցած* լերդի դնես զտաքութիւնն կտրէ» (165): «...և այնու փորեա *զկակղացուցած* տեղն և հան»(33): «...չարեէկ մի *յիստակած* ծովու ջուր և հօտի մոխիր երկու նուկի *ծրարած* և...»(104): «...և լից յինքն *փտեցուցած* աղբահող»(163): «եւ թէ ուզես որ զկոտորած պտուղն այսպէս առնես, ա՛ռ զպտուղն *ընտրած*, և կոտորեա»(186): «եւ 'ի հաստատած

այգին որ սարբնայով լինի»(63): «եւ գիտելի է զի զմէկ տարւոյ *սնուցած* աղբն պարտ է 'ի բան տանիլ»(28): «...և յետո 'ի ծեփած հորոնն ամնեն, և պահէ զցորեան»(31): «Նոյնպէս երբ վաստակես *զբուսած* և *զծաղկած* թրմուզն հետ այլ խոտին»(37): «Ա՛ռ աւազ *լուացած* և յարդ, դի՛ր 'ի պարզուտն և քամեա»(94): Արժան է զպանդրած և զմազմզկած այգւոյ տունկն զերդ մտանէ ոք... 'ի հանել...»(35): «...դու բա՛ց *խծկած* ընջղոյն բերանն»(195): «Բայց եթէ ի սպիտակ գետինն պատառած մքռա չլինի...»(40): «Վասն որ զնոր *կտտած* գինին լաւացուցանես»(113):

Առանձին դեպքերում միայն հանդիպում են նաև ներգործական իմաստով կիրառություններ, ինչպես՝ «Պարտ է *ծնած* կովուցն ժիլաւպ կամ այլ ազգ հնդանք տալ, և լաւ դարմանել, որ զկաթն շատացուցանէ» (210): «Ա՛ռ յիստակած անուշահամ մեղր՝ զուֆր *քաղած* և *քամած* 'ի մաղ»(126): «Ա՛ծ զջուրդ 'ի նոր անձիւթ ամանն և դի՛ր յարևն, *կալած* զբերանն»(186): «...և ապա զչամանն, և 'ի վերայ զքացախն մեղրախառնած»(188): «...և օծանէ *զկերած* տեղին և զտակն նա ողջանայ»(145): «Երբ գետինն զիւր բոյսն *անտած* և վայրի»(119):

Հարակատար դերբայը հանդես է գալիս նաև ինքնին՝ արտահայտելով գործողության կատարման ձևը, ինչպես՝ «...ա՛ծ նոր *ծխած* և *ծիւթած*, և 'ի վերայ զանոյշ գինին, և ծեփեա՛»(119): «...և զինքն լաւ *փորած* և *կակղած*, որ ջուր մտանէ» (179): «...և այն խոտին որում ասայի ռայի ասեն յարապ լեզուն, որ է հովուի բիր, 'ի ձէթ *դրած* և *սնուցած*»(209): «...աղէկ շանն շնհարք պարտ է շինել վզին հաստ կաշեաւ, և խոցերն երկաթ 'ի յինքն *բեւեռած*»(221): «...և յերբ մեծանան՝... 'ի մսուրս՝ սէզ և *մաղած* յարդ տալ, աղջրով *շողրեցուցած*»(215): «Եւ այլք ոմանք զչամիչն 'ի կորիզէն *հանած* 'ի ճուլպանին ալիւրն խառնեցին»(96): «...վասն զի զիւր յատուկն 'ի սպրկիկն կայ *հաստատած*»(104):

Հարակատար դերբայը կարող է ձևավորվել նաև *-ուկ* մասնիկով: Վերջինս շատ սահմանափակ կիրառություն ունի և բնորոշ է Մշո, Վանի և այլ բարբառներին: Ա.Աբրահամյանը հարակատար դերբայի այս տարբերակի հետքերը տեսնում է և՛ գրաբարում և՛ արդի հայերենում[8]: -Ուկ –ով հարակատարը «Գիրք վաստակոցում» հանդիպում է երկու անգամ, մի դեպքում՝ գոյականական, մյուս դեպքում՝ ածականական կիրառությամբ. «...և դարձեալ *զծեղքուկն* յիրեար ա՛ծ, և խշրով կապեա...»(130): «Եթէ *հաստուկ* մարդ լինի այգւոյ տէրն՝ չէ պարտ որ աւելի հօտէ, քան ութ պարան այգի»(10):

---

[8] Տե՛ս նշված աշխատությունը, էջ 222: